*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահի Ռ. Քոչարյան
*1 սեպտեմբերի 2004 թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2004 թվականի N 1160-Ն

## ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԶԵՆՔԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի և «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության զենք պահելու և կրելու իրավունք ունեցող աշխատողների պաշտոնների ցանկն ու նրանց կողմից օգտագործվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և թիվը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից օգտագործվող անհատական պաշտպանության հատուկ միջոցների ցանկը և թիվը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողների կողմից օգտագործվող զենքի մասին» N 189 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

2004 թ. օգոստոսի 20
Երևան

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2004 թվականի**
**հուլիսի 15-ի N 1160-Ն որոշման**

### Ց Ա Ն Կ

### ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԵՆՔ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿԻ, ՁԵՎԻ, ՄՈԴԵԼԻ ԵՎ ԹՎԻ

| Պաշտոնը | Հաս- | Զենքի տեսակը | Զենքի ձևը | Զեն- | Զենքի մոդելը |
|---|---|---|---|---|---|

| | տիք-ների թիվը | | | քի թիվը | |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ գլխավոր հարկադիր կատարող | 1 | ծառայողական | կարճ ակոսափող | 1 | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության քրեագիտական պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագիր ունեցող ցանկացած մոդել |
| Վարչության պետ | 1 | ծառայողական | կարճ ակոսափող | 1 | |
| Վարչության պետի տեղակալ | 2 | ծառայողական | կարճ ակոսափող | 2 | |
| Բաժնի պետ | 14 | ծառայողական | կարճ ակոսափող | 14 | |
| | | քաղաքացիական | գազային | 14 | |
| Բաժնի պետի տեղակալ | 12 | ծառայողական | կարճ ակոսափող | 12 | |
| | | քաղաքացիական | էլեկտրահարող սարք | 12 | |
| Բաժանմունքի պետ | 16 | ծառայողական | կարճ ակոսափող | 16 | |
| | | քաղաքացիական | գազային | 16 | |
| Ավագ հարկադիր կատարող | 71 | ծառայողական | կարճ ակոսափող | 71 | |
| Հարկադիր կատարող | 144 | ծառայողական | կարճ ակոսափող | 144 | |
| Հարկադիր կատարող-հերթապահ | 2 | ծառայողական | կարճ ակոսափող | 2 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 263 | ծառայողական | կարճ ակոսափող | 263 | |
| | | քաղաքացիական | գազային | 30 | |
| | | քաղաքացիական | էլեկտրահարող սարք | 12 | |

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2004 թվականի**
**հուլիսի 15-ի N 1160-Ն որոշման**

**Ց Ա Ն Կ**

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Ձեռնաշղթա` 50 միավոր

| | |
|---|---|
| Ռետինե մահակ՝ | 279 միավոր |
| Ջրահարբաճկոն՝ | 50 միավոր |
| Սաղավարտ՝ | 50 միավոր |

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Մ. Թոփուզյան**